



ԲԱԶՄԱՎԷՊ

Ի ՏԱՐԻ, ԹԻԻ 2

1862

ՓԵՏՐՈՒԱՐ 1

ՀԱՅԱԴԻՐ

Արաց 1. — Փետրուար 6: ✠ Բ Լեոն Թագաւորի:

Անցեալ հայադիր ամսոյն (քաղոցի) 29^ն Ա Լեոն Թագաւորի փառաց հանդէսները յիշատակէր. այս (արաց) ամսոյս 30^ն (6 փետր.) Բ Լեոն Թագաւորի մահը նշանակէ: Բայց մեր ականջին՝ դեռ աստուածայայտնութեան տօնից ձայներն հնչեն, դարձեալ Թագաւորական հանդէս, դարձեալ ջրօրհնեաց համբաւ: Առեցէք երեկոյեան խորոյկը, վասն զի այս ամիս այլ առաջինէն չիտարբերիր ձիւնափայլ կերպարանօքն, մեր աշխարհին մէջ. բոլորեցէք հայրենի կրակարանին եզերքը. և հրամեցէք ՚ի Լիւլիկիա, յարքունիս Թագաւորին Հեթմոյ, Հեթում (այս անունը կրողաց մէջ ամենէն անուանի և սիրելի անձն) Հեթում Ա, յաջորդ մեծին Լեոնի, ինքնին հրաւեր կուտայ, և քան զուրիշ տարիներ աւելի արտորանօք, իր հաւատարիմ հպատակացն և պարոնայցն՝ գալու ժողովելու բազմութեամբ: Այս փութան իշխանք և պարոնայք՝ ասրահովընէլ իրենց ա-

մուր բերդերը և իջնել լեռներէն, ելլել պարագապատ քաղաքներէն և ժողովիլ ՚ի Սիս: . . . Եւ ինչո՞ւ ոչ ՚ի Սիս, յաթոռն Թագաւորաց: — Սի հարցունէք. պարոնայքն գալու և անցնելու տեսն՝ կու նային մէկ մը այն մայրաքաղաքին կողմը և դեռ եզրիպտական սև ծխոյն նշանը տեսնելով, գլուխնին շարժելով՝ երեսնին խաչակնքելով դարձնեն ճամբանին. թէ և շատ դժար կու գայ իրենց յառաջէն, վախնալով Թագաւորին տիրամած դէմքը տեսնելու սակայն մէկ մ'այլ իրենց հրաւերքի թուղթերուն վրայ նայելով և տեսնելով անոնց արքունի կարմիրկապ կնիքը՝ սիրտ կ'առնուն, և կու մտնեն ՚ի Սիս, յորոշեալ օրը նախ քան զտօնաներկայանան միաբան բարեւել և շնորհաւորել Թագաւորին զնոր տարին և զաւագ տօները: Սիրով և պատուով կ'ընդունի զնոսա Թագաւորն, և փոխարէն ողջոյններ տալով կու հրամմէ որ բազմին, և նախ ինքն բազմի ծանրութեամբ իր

գահը : Ս՛հ , որչափ այլափոխուեր է
 թագաւորին դէմքն քան զանցեալ տա-
 րին . տարի մը միայն կրնա՞ր այդքան
 աւելցնել հազիւ վաթսնամեայ գըլ-
 խոյն ալիքը՝ որ ոսկի պսակին տակէն կա-
 խուած՝ իր սպիտակ արքունի բեհեզեայ
 քղամդին խառնուին . երկընցած դէմքն
 այլ այն գլխուն դեղին թագին նման-
 ցնել : Ս՛րչափ տարբեր էր այդ դէմքն
 այն հեթում թագաւորի ոսկեհատիկ
 վառվռուն կերպարանքէն , երբ այդպի-
 տի հանդիսական օր բարձր գահուն վը-
 րայ ելած ատեն , Սիւրիկիոյ ամենէն ազ-
 նիւ ծնունդն՝ տիկնաց տիկինն Օ ա-
 պել , դուստրն մեծին Լեոնի , աջ կող-
 մը բազմէր , իր կենակից և թագակից
 դշխոյն . գահուն բոլորը բռնէին իր հինգ
 վեհակերպ մեծապատիւ եղբարքն , Սըմ-
 բատ գունդստապէն՝ հին հայկազանց և
 Սարգանանց նախանձորդ զօրավարն
 հայոց , Լեոն մեծ մարաջախտն , Լի-
 կոս գայլանուն կտրիճն , Սարսեղ վե-
 մսփայլ արքեպիսկոպոսն և առաջնորդ
 Սրազարկու , և Յովհաննէս երիտա-
 սարդ արքեպիսկոպոսն Սամեստիոյ և
 առաջնորդ Սրբակաղնոյ . գահուն ստու-
 րտը Սողոմոնի սուտ առիւծներուն
 տեղ՝ երկու եռանդուն կրակոտ կորիւնք
 կենային՝ Լեոն և Սարոս թագաւորոր-
 դիք . և իբրեւ ամենուն հովանի՝ թա-
 գաւորին ձախ կողմը նստէր փառօք իր
 ջոջգլուխ արքայահայրն՝ Սողոմոն Սոս-
 տանդին , աբրահամեան ծերունին :
 Սոս յիշեալ մեծափայլ և մեծազօր
 արքունական սիւններն այսօր խորտակած
 կ'երևային ժամանակի օրէնքէն . միայն
 ամենէն կրտսեր արքայ-եղբայրն Յով-
 հաննէս արքեպիսկոպոս մէկդին բազ-
 մէր , մէկայլ դին այլ ամենէն մեծն՝ ծե-
 րունազարդ սպարապետն Սմբատ , ոս-
 կէկոթ թրին վրայ կռթրնած , երբեմն
 Լըբեմն թաւ թաւ յունեբուն տակէն
 երկու խոր կայծակներ պտըտցնելով :
 Սագաւորին գլուխն այլ ծանրացեալ
 կ'երևէր գրեթէ կէս դար կրած թա-
 գէն . 43 երկայն և բազմափորձ տարի-
 ներ պէսպէս գոհար քարերու պէս շա-
 րուած էին անոր վրան . որչափ զանազան

տեղուանք , որչափ զանազան անձանց
 մէջ կանգներ էր հեթումայն գլուխը .
 որքան երկայն և տարեւոր ճամբաները
 ներլով՝ Սիւրիկիոյ դռներէն մինչև Սա-
 թարստանի խորագոյն անապատները՝
 ազգին և տանը համար քրտնելով , կի-
 մանայր հիմա պսակին ծանրութիւնը :
 Եւ թերեւ անկէ ետեւ փափագելի էր
 իրեն հանգչեցնել այն հոգնած գլու-
 խը , ըլլա՞ր նաև սե քարի մը վրայ : ...
 Սայց սրտին վրայ այլ կայծանրութիւն
 մը , և շատ աւելի մեծ ծանրութիւն .
 ինչուան որ զայն չիթեթեցնէ , իրեն
 համար մահն անգամ անհանգիստ է : ...

Սոնք մեր մտածութիւններն չեն .
 այլ այն բազմախումբ պարոններուն որք
 բազմեր են թագաւորին դիմաց : Սակ
 հեթում իբրեւ թեթեւ քնէ մը թօ-
 թութիւն գլուխը , և ծածուկ կրակով
 մը վառելով աշուրները՝ կու դարձնէ
 հոն եղող իշխանաց վրայ , և յետոյ կու
 հրամէ սենեկապան սպասաւորաց՝ որ
 պակասներն այլ կանչեն և նստեցնեն .
 իսկ սպասաւորք կարգէն պակաս չիգը-
 նելով՝ կ'իմացնեն որ ամէնքն այլ հոն
 են : Սագաւորն նորէն աչք դարձնե-
 լով՝ կու տեսնայ , թէ ոչ շատ , այլ մեծ
 պակաս , կու հրամէ կու ստիպէ որ զա-
 նոնք այլ կանչեն : Սպասաւորք շփոթած
 կու նային կու համբեն , պակաս չեն
 գտներ , և վախով մօտենալով կ'ըսեն ,
 Սուրբ թագաւոր՝ ամէնքն հոս են : Սա-
 գաւորն նեղանայ . սպասաւորք իրար
 անցնին , իշխանաց կու դառնան . ասոնք
 այլ կ'ապահովցնեն զթագաւորը , թէ
 Սուրբ թագաւոր՝ ամէնքն այլ որոց հրա-
 ւերք և պատուէր խաւերցիք , հոս են ,
 պակաս չկայ պարոններէս : Սոս ատեն
 թագաւորն անգամ մ' այլ սրափայլ
 աչքերը չորս դին դարձնելով և բար-
 կացեալ , այլ մարմնած և հեծկտած
 ձայնով կանչէ . Եւ թէ ամէնքն հոս են ,
 ո՞ւր են հապա իմ պարոնաց պարոնքս :
 Լեոն և Սարոս . . . Լեոն և Սարոս .
 երկու կրակէ նետերու պէս թռան այս
 անուանքս թագաւոր հօր մը բերնէն ,
 և չմնաց ողջ սիրտ մը . իշխան , պարոն ,
 եպիսկոպոս , ասպետ , սպասաւոր , ա-

մէքն վիրաւորի հառաչանք մը փրցնելով սկսին լալ վայել, երկինք երկիր նայիլ. բոլոր արքունական ատեանն՝ նոր մեռած անդրանիկ զաւկի մը սգասեմեակ դարձաւ. թագաւորն ծածկեց հայրական դէմքը իր սպիտակ բեհեզին տակ. և մէկն չէր համարձակէր մօտենալ, բան մը ըսել, մխիթարանք մը տալ. պարոնաց գլուխն՝ ի գետին կորակելով, վարդապետաց և եպիսկոպոսաց թուռնքը դողով համրացեալ, կ'ուզէին որ եղածն երազ ըլլար. կամ թէ չէր խրեի անկէ հեռանալու, գոնէ անլգայ ըլլալու. — Բայց ո՞վ կրնայ անլգայ ըլլալ, երբ ձիաւորաց պարծանքն՝ լուարթունն (ձորոս)՝ դեռ իր չորեքամեայ գերեզմանին մէջ սեւ սեւ վերքերուն նշաններով ահեղ դիւցազինման պառկած կ'երեւար գիմացնին. որբ լուսադէմ թագաժառանգն՝ Լեոնարբարոս Պիյալարսայ սուլտանին սեւ երդին մէջ շղթայակապ տանջուէր. խոկալին Սմբատ անգամ, հօրեղբայրն իրուն և կտրիճ կորեանցն, ձեռքը թըլին, թուրն ի գետին, թանն ի գահ թագաւորին կռթնած՝ արտասուածափ աչքերը վերուցած ատեն՝ կարողութիւն թէ մէկէն պիտի ցափէ և արեւուն նիզակներէն մէկը կորզած վազէր թայ Սորայ սուլտանին գահը կոխէ, իր եղբորորդին՝ պարոն Լեոնը, լախտակէ բերէ հօրը գիրկը. իսկ երբ լուխը թօթուելով նորէն դէպ ի ուրծքը կ'իջեցնէր, կարծուէր թէ շխարհք անցեր է հայոց տանն հաւար. և ամէնքն այլ գլխակոր միայն... (Ժանձր սուգ մը պատեր էր ձեթմոյ արքունիքը, զոր արեւելքէ և արեւմուտքէ, (Ժաթար դանէն և սըրազան Պապէն եկած մխիթարութեան թերն անգամ չէին փարատած)...

Ինչպէս եկաւ այն սեւ սուգն, ինչպէս եղաւ այս չար դիպուածն. — Պիւնէք որ Սիւրիկիա թէ և ամուր երկիր, այց չորս դիէն օտարազգի տէրութիւն երով պատած էր, որբ կ'ուզէին յաւելտակէլ այն պատուական աշխարհը. խաղաւորք հայոց երբեմն բարեկա-

մութեամբ, երբեմն զէնքով կու զգուշանային անոնցմէ. որոց զօրաւորապոյնն, Լիոնիոյ սուլտանն, շատ հեղ Լեոնի և հեթմոյ հետ կուուեր էր, երբեմն մէկն երբեմն մէկայն յաղթելով. բոլորովին ապահովութեան համար՝ հեթում նախ իր եղբայրը՝ Սմբատը՝ զրկեց առ դանն (Ժաթարաց, յետոյ ինքնին դնաց առ Բպաղա, և երեք չորս տարի ուշաքաւ յօտարութեան. մեծազօր և ահարկու հէլակիւ դանէն ստիպուեցաւ նիզակակից ըլլալ, Բարաքուց և (Ժաթարաց դէմ շատ պատերազմներ ընել, և Բաղդատ առնուլ, ու բոլոր Պարսից, Սիլվապիտաց, Բորեստանի, հայոց և Բորուոց իշխանները նուաճել. որով իր սահմաններն այլ ազատ և հանգիստ մնացին շատ տարի. և մօտ զօրաւոր թշնամի չկար, բայց միայն Սորայ սուլտանն, որ հեռուէն կու սպառնար. իսկ հեթում մէկ կողմէն երկիրը պարիսպներով և բերդով ամրացուցեր, մէկայլ կողմէն (Ժաթարաց օգնութեան վրայ վստահացեալ էր, և այլ աւելի իր խորագետ հօրը խրատուց և եղբօր քաջակիւ բազկին վրայ. Բաղդատը առնելու ատեն Եգիպտոսի սուլտանին կողմանէ այլ մարդ կար հոն, օգնական խալիփային. ասոնցմէ երկուքն կրցան փախչիլ. մէկն էր Ֆունտուքտար՝ Պիյալարս, չափաւոր տարիքը առած, մէկ այլն երիտասարդ մը Սոնգոր էլաշքար (չէկ կամ կարմիր բազայ) անուամբ, որ իրեն պէս կտրիճ վազուկ ձի մը ունէր. և տեսնելով ընկերին թէ հասակը թէ գէշ ձին՝ վախցաւ թէ գերի ընկնի սպաննուի. ստիպեց որ իր ձիուն վրայ հեծնի և փախչի. (Ժէ որ ես գերի ընկնամ, կ'ըսէր, տղայութեանս խնայելով՝ զիս չեն սպաններ. քու

1. Մեր պատմիչք անուանեն զսա Պանդուխտար կամ Ֆնդուխտար. որ բնիկ անունն չէ, այլ մականունն է, առած իր տիրոջմէն. և տէրն այլ իր եղած արքունեաց մէջ պաշտօն ունէր իշխանին գնտակ տալու խաղի տոնն. այս պաշտօնէին կ'ըսէին Ֆունտուքտար. Թերեւս այս անունն համար Լեոնի գերութեան երգիչն, որ վերջը պիտի յիշէք, գնտակի խաղալը յիշէ:

պարտքդ ըլլայ ազատել զիս : Եւ նման
այնպէս եղաւ . կարմիր բազայն բըռ-
նուեցաւ , Պիյպարսս սրծաւ և հասաւ
յԼգիպտոս . յորդորեց անոր Վուգ-
դուզ սուլդանը թաթարաց դէմ պա-
տերազմ բանալու . և պատերազմին
մէջ այլ շատ քաջութիւն ըրաւ , անոր
համար վարձք ուզեց հալէպի կուսա-
կալութիւնը . և երբ սուլդանն չիտը-
ւաւ , Պիյպարսս համախոհութեամբ քա-
նի մը իշխանաց սպաննեց զնա և տեղը
անցաւ (1260^{ին}) : Ինկէ ետեւ գլխաւոր
մտածութիւնն էր վրէժ առնուլ ի թաթ-
արաց և անոնց օգնականներէն .
յարմար առիթ այլ գտաւ հէլակիւ և
Պերքայի մեծ զաներուն ազգային
կռիւները . որոնցմէ յաղթուող և փախ-
չողները կ'ընդունէր իր քով : Ինոր հա-
մար հէլակիւ պատուիրեց հեթմոյ՝
իր նիզակակցին , որ Լագիպտոսի սուլ-
դանին վրայ յարձըկի :

Հեթում խորագիտութեամբ նախ
Իկոնիոյ սուլդանին հետ դաշնադրու-
թիւն ըրաւ (1262), յետոյ վազեց Իսն-
թապայ վրայ . բայց Պիյպարսս առա-
ջուց իմանալով ըլլալիքը՝ շատ զօրք
խաւրեց խափանեց հեթմոյ խորհուր-
դը . այն ատեն հեթում քանի մը հա-
րիւր մարդ այլ ի թաթարաց առնելով և
150 ասպետ անտիրօքացի , մտաւ Իսոր-
ուց երկիրը , բայց ցուրտէն ստիպուե-
ցաւ յետ քաշուիլ . մանաւանդ որ Պիյ-
պարսս կու գար իր երկրին սահմանները
կոխելու : Ինկէ ետեւ սկսան մէկմէկու
դէմ պատրաստուիլ սուլդանն Սորայ և
թագաւորն հայոց , և զիրար հնազան-
դութեան կանչել , թէ և իրարմէ կու
վախէին . բայց երբ հէլակիւ՝ պաշտ-
պանն հեթմոյ և քրիստոնէից՝ մեռաւ
(ի սկիզբն 1265 տարւոյ), Պիյպարսս
սկսաւ համարձակ յառաջ գալ : Եւ իս-
խաչակրաց ձեռքէն առաւ ամուր քա-
ղաքները . վերջը պահանջեց ի հեթ-
մոյ՝ որ Իսորուոյ դռները ազատ թողու իր
մարդկանց անցնելու , չարգիլէ իր եր-
կրէն ցորեն բերելու , և նաև իրեն հարկ
տայ : Հեթում պատասխան չտուաւ
անոր . թէ և դէմ կենալու չէր համար

ձակէր , բայց և ոչ այլ դաշնադրութե-
լնել , թաթարներէն ակնածելով , վա-
զի թշնամիք էին Լագիպտացուց : Ի-
այսպիսի դժար դէպքեր կան վարչ-
ութեան մէջ , որ փոքր տէրութեա-
(ինչպէս էր Կիլիկիացոյ) հնար-
անհնար կ'ընեն : Պիյպարսսայ ուզա-
յալ այս էր . հրաման տուաւ համա-
ել-Իմասուր իշխանին և Վալաւո
զօրավարին և ուրիշներու (որոց մէ-
ջ Սիմօթ կ'անուանեն մեր պատմիչք
յարձակիլ ի Կիլիկիա . ուր և մու-
օգոստոս ամսոյն սկիզբները 1266^{ին}
հեթում առաջուց լեռները բերդերու
և պահպաններով ամրացուցեր էր .
Լագիպտացուց շարժմունքը լսելուն պէ-
ունեցած զօրքը տուաւ իր երկու կտրի
կորիւններուն , թագաժառանգ Լեոն
որ այն ատեն երեսնամեայ էր ,
քաջ ձիաթափ թուրոսի՝ որ աւելի ծա-
կահասակ էր , և երկուքն միատեղ ք-
նի մը տարի առաջ (1260) ասպետ կա-
գեր էր . պատուիրեց անոնց որ ծով
զերբի և լեռանց միջոցը՝ Իշքեսանդրի
(Իսքէնտերուն) քովի բռնակապան
պահեն : Իսկ ինքն՝ իրմէ աղէկ դեսպա-
նի գտնելով՝ սիրտ ի բերան առած փո-
թացաւ պզտի գնդով մը գնաց թաթա-
րաց զօրավարին , որ Ելպոստանի
Կոկիսոնի մէջ տեղ բանակէր էր , և օ-
նութիւն խնդրեց շուտով . բայց որչա-
տաղանց , մօտակայ վտանգը առաջ դի-
րաւ , որչափ որ իր անգին զաւակայ
վրայ կասկածոտ հօր մը սիրտ կրնա
խօսիլ և ջանալ , անօգուտ եղաւ . թաթ-
արն յամառեալ կ'ըսէր թէ առա-
հրամանի էլ-զանին Ելպաղայի՝ չեմ կը-
նար մարդ տալ : Ուրիշ ճար չկա-
պէտք էր սուրհանդակ խաւրել զանի
և խաւրեց . բայց սուրհանդակն ալ
պէտք էր կամ հայր ըլլալ կամ թը-
լուն , որ քիչ օրուան մէջ կարենայ
տրել բոլոր Փոքր և Մեծ հայոց
նութիւնը , և սրանալ ինչուան Սի-
զանդարանի մօտերը , ուր գտուէր զան-
հրաման առնուլ և բերել թաթար
րավարին : Իւրեքօք սպասէ հեթում
սուրհանդակին դառնալուն . բայց

Թէ անգութ և ճարտար Թշնամին այլ անշարժ կու սպասէ իր տեղը . արդեօք դառնայ Թուշ յօգնութիւն զաւերելուն . բայց եթէ ինքն անկէ հեռանայ՝ Թաթարներն Թերևս տեղերնէն այլ չեն շարժիր օգնութեան գալու : Այս դժուարութիւնս առջինէն ծանր էր . հարկ էր հեթմոյ հոն սպասել 15 աւուր չափ . բայց իր քաշած երկայն համբերութիւնը՝ ո՛վ կրնայ չափել . ո՛վ կըրնայ կշռել սրտին արեւոծութիւնը այն պիսի ատեն , որ յիրաւի բաւական էր հեթմոյ , Թէ և սև այլ ըլլային՝ մազերը ճերմկեցնել , և օրուան տեղ՝ տարի մը ծանրացնել հասակին վրայ :

Իսկ Թագաւորորդիքն ինչ կ'ընեն , ի մառուան ամենէն տաք օրերուն , որ Վիւրիկիոյ քարուտ կողերէն կրակ կու բրդիւն դաշտերուն վրայ , մինչ մերձակայ վանքեր Եւ Բստուածածնայ վերափոխման տօնը հռչակէին լեռնէ լեռ ձորէ ձոր , իրենք հոն կեցեր այրելով մրկելով կու սպասէին հօրերնուն , և Թըշնամուն . և ետքիս աւելի շուտ հասաւ սկարծած կողմերէն : Երեսնց կռիւնած լերանց վրայ հեթում աշտարակներ կանգներ և պահապան դրեր էր զգուլութեան . և ոչ ոք կարծէր Թէ մէկն այնպիսի տեղէ անցնելու փորձ փորձէ . բայց Պիյալարս իր զօրաց 15-20 օր միայն միջոց կտրեր էր Վիւրիկիա ասպատակելու և կրցածնուն չափ աւերելու . պէտք էր որ ամէն ջանք ընէին . և ահա յանկարծ Խսքէնտերունի լեռներուն գլխէն , սև մրրկի պէս սկսան վար Թափիլ Արդիպտոսի հնոցանման տաք օդուն վարժող մամէլիւքներ , որ լցին վարի դաշտը : Հայք (ինչպէս շատ հեղ այսպիսի ատեն կու հանդիպի) յանկարծութեան չփոթած իրար անցան . տասն և երկու մեծ իշխան կար մէջերնին , ոմանք զարնուեցան , ոմանք փախան , ոմանք բռնուեցան . հոն էր և արքայ-եղբայր գունդատալն Սմբատ և իր կտրիճ զաւերներն Եւ ին , հեթում . հոն իր մէկ եղբայրն այլ (Իկոս) , որ նոյնպէս իր Թագաւոր եղբօր օրդուոյը պաշտպանութեան համար պատերազմելով՝ փառօք

ընկաւ զէնքն ի ձեռք . իսկ Սմբատայ այս բաղդս չիտրուեցաւ այս անգամ , այլ պահուած էր ուրիշ պատերազմի . իսկ հիմա պէտք էր հայոց բանակին մնացորդը՝ բոլորովին կոտորածէն ապրեցնել : Ինչ ջանք չըրաւ արդեօք այն առիւծ դարձած սոսկալի սպարապետն իր եղբօր կորիւնները ազատելու , որոնք հոն իրմէ աւելի իրենց հօր պատուէրին , և անկէ այլ աւելի իրենց քաջասրտութեանը ուղեցին լսել : Սմբատ չէր դիտէր՝ մնացեալ զօրաց առաջնորդել , Թէ անոնց քովը կենալ . եթէ անոնց յամառ քաջութեանը նայելով քովերնին կենար , անշուշտ հայոց բանակէն մարդ մը պիտի չազատէր . ապա՝ մէկ մը մնացեալ իշխանորդիները և զօրքը ապահովապէս ետ քաշէր , մէկ մ'այլ արքայորդուոց վազէր : — Բայց որոն հասնի . Եւ ինչ Սարուանդի-քար բերդին ոտքը կեցեր , Թորոս իրմէ շատ հեռու կուռի . Եւ ինչ ջանայ հօրեղբօրն հետ պաշտպանել իրեններուն , Թորոս անդադար առաջ առաջնետուի իր բարձրապինչ բարձրափունչ ձիովը , զարնէ կոտորէ զԹշնամին : Ինչք Վիսնի դաշտը չեմք տեսած , և ոչ զհեկտոր՝ Տրովայ պարիսպներէն դուրս Բիլլեսի դէմ պատրաստուած , և ոչ անոր ծերունի հօրն և մօր և կնոջ աղաչանքը լսած՝ զինքը այն սոսկալի հսկային անյաղթելի զէնքերէն յետ կեցնելու . բայց Թորոսի համար կրնար պակաս ըսել հայ հոմեր մը , եթէ հոմերի կէս հոգին այլ ունենար : Բանի մը հաւատարիմ զինակիրներով միայն մահու շրջանակի մը մէջ ցատքըտելով իր բարձրափունչ ձիովը և սեռ փոթորկի պէս չորս դի մրկելով՝ բոլոր ծաղկեալ երիտասարդութեան ուժովը , կէս գունդ մը ձեռացնէր . վահանը Թողած՝ Թուր ունիզակ էր շարժածը , որոնց հարուածէն՝ անտառահար փայտից պէս անթիւք փռուեցան բոլորտիքը . ինչուան տասն հազար եգիպտացի սպաննեցին , կ'ըսեն , այն օր այդպիսի կտրիճ հայք : Թորոս դեռ աչուրներն արիւն դարձած՝ ամէն դի արիւն տեսնէր , արիւն

հաներ, ոչ տուած և ոչ առած վեր-
քրիմանալով. շատերն իրեն յորդոր և
ձայն տուին. հերիք է՝ թագաւորորդի,
յետ դարձիր. բայց ոչ մէկուն այլ չի-
լսեց. չիլսեց անշուշտ մերձաւոր ընտա-
նեաց գթոյն, և ոչ իսկ հեռաւոր հօր
մը ծածուկ ձայնին, « Դատ է ազնիւ
որդեակ իմ (ժ)որոս, (ժ)որոս դարձիր
այս անգամ, մինչև գայ հայրդ այլ և
մէկտեղ վրէժ առնունք », չիլսեց
այս ձայներուն, այլ այն մարդակոտոր
սև անտառին մէջ մինակ մնացած բար-
ձրաձաղի ծառոյ մը պէս՝ դեռ ճոնչա-
լով չէր դադրէր իր հարուածներէն,
մինչև բազմութիւն սուսերաւոր թշնա-
մեաց երթալով մօտենային, և շատ
անգամ հարցընէին. Սոսկալի կտրիճ,
ո՞վ ես դու, ի՞նչ կ'ուզես. քու բոլոր բա-
նակիդ չըրածն՝ դուն միայն կ'ուզես ը-
նել. ձգէ անկուշտ զէնքերդ և եկու ա-
պրէ քաջի պէս մեր ձեռքը: (ժ)որոս՝
միայն զանոնք զարնելով պատասխան
կու տար. մինչև քանի մը անգամ անձ-
նատուր ըլլալու յորդորելէն և օգուտ
չըլլալէն ետև՝ կատղած սուսերաւորքն
մօտեցան պատեցին այն մէկ հատիկ
վարսաւոր ծառը, ձիաւորնահատակը,
որ գրեթէ անոնց բազմութենէն խրդ-
ղուելով՝ և իրմէ առաջ վիրաւորած
ձիուն կռնրկէն վայր ընկնալով՝ կոտրած
նիզակին վրայ երես 'ի վայր փռուեցաւ
երկայն, յետին անգամ հայրենեաց
հողը համբուրելու շնչակտուր շրթուն
քովը... Կողոպտողք արիւնջուայ զրա-
հիցն իմացան, բայց ափսոս քիչ մի ուշ,
որ հայոց թագաւորին որդին է ե-
ղեր կտրիճ՝ այն, ապա թէ ոչ՝ գուցէ
աստուածորդի այլ կարծուէր դիւցա-
տիպ (ժ)որոսն այն: Այս պակաս անկէ
քաջութեամբ կուէր և Առն. նոյն-
պէս կուուեցան և իրենց հօր եղբօր-
որդիքն, Սմբատայ կորիւնքն. որոնց
մէկն այլ մեռաւ, մէկայլքն՝ Առնի և
իր հաւատարիմ ճորտերուն հետ՝ գերի
ընկան թշնամեաց ձեռքը: Ո՞վ կրնայ
պատմել անգութ Պիլյարոսայ ուրա-
խութիւնը՝ երբ գիմացը հանեցին զա-
նոնք, յետ 20 օր Ախլիկիոյ մէկ մասը

աւրելէն և այրելէն և մայրաքաղաքը
այլ կողոպտելէն, թագաւորաց գերեզ
մանները քակելէն և գանձերը պարպե-
լէն, որոց միայն մէկ ամանէն 60,000
կարմիր (ոսկի) հաներ էին, դառնա-
լով անբաւ աւարով, մինչև եզ մը եր-
կու դրամի ծախել:...

Իսկ հետեւ մինչև ցերեք կ'ուշա-
նայ. մանսուանդ թէ մինչև ցերեք գան-
դաղին (ժ)աթարք... ահա դառնա-
սուրհանդակն, հաճութեամբ Մարա-
ղանին. հետեւ (ժ)աթար գունդը ա-
ռած՝ գացածէն աւելի շուտով կտրէ օ-
րերով երկայն ճամբան. կու մտնէ իլ-
երկիրը... և ընտանի լուծիւն մը ու-
օտար աղաղակ, սև նշաններ, աւերա-
կաց փոշին, այրածներուն ծուխն՝ ա-
մէն բան իրեն կ'իմացընեն. դեռ կու-
տեսնայ Ագիպտացւոց վերջամնացները
որք իրմէ երկու օր առաջ ելեր էին եր-
կրէն, և դեռ կու լսէ անոնց քամահան-
քը և աշխարհին հառաչանքը. կ'իմա-
նայ, կու զգայ Առնի գերութիւնը
(ժ)որոսի մահը:... Աթէ ամէն բանէ
վեր կրօնքի ոյժը չզգար հետեւ
չեմ գիտեր արդեօք ի՞նչ կ'ըլլար կամ
ի՞նչ կ'ընէր. բայց այս ուժով միայն սիր-
տը բռնելով, և այլ ամէն բան թողլով
գլուխը կու դարձնէ դէպ իր քաջայի-
շատակ աներոջ շինած վանքը, և հոն
այն մեծ թագաւորին (Առնի) գերեզ-
մանին վրայ ընկնալով և սուրբ վանա-
կանաց հոգեխօս մխիթարանքը լսելով
հազիւ կրնայ քիչ մը զսպել զինքը.
« Իայց զսիրտն (կ'ըսէ ականատես
պատմիչն¹) ինքն և յատուած միայն
գիտէին թէ որպիսի կրակով լցեալ
էր, զի ոչ տեսանէր զայնպիսի գեղեց-
կապատկեր և զծաղկալից որդիսն իւր
առաջի իւր. ոչ յերեկոյ և ոչ 'ի վա-
ղիւն, և ոչ 'ի ժամ ճաշոյն յուտել և
ըմպել. և ընդ միտ ածեալ զանմխի-
թար աղէտս գեղեցիկ որդւոյն, զ(ժ)ա-
րոսի գեղեցիկ պատկերն և զվայե-
լուչ հասակն՝ որ 'ի սրոյ բաժանեցաւ
յանողորմ և արեանարբու անօրի-
նացն, նոյնպէս և զԱռնի ահիւ և

1. Մաղաբիտ արեղայ:

„ անգոհիւ լինեն 'ի մէջ այլազգեացն 'ի
„ ծառայութիւն . զայս ամենայն զմը
„ տաւ ածեալ բարեպաշտ թագաւորն
„ Հայոց , այլէր անհնարին կրակով ,
„ և գալարէր աղիքն յաղագս սիրոյ որ
„ դուցն որ ոչ տեսանէր , և թաւալէր
„ ընդ երկիր անմխիթար սգով , բայց
„ Կաղտ և 'ի ծածուկ , : Սրիշ ծեր
„ պատմիչ մ'այլ , ծանօթ Հեթմոյ , իր
„ համաշխարհական պատմութիւնը լը-
„ մանցնելու ատեն՝ լսելով իր հիւրըն-
„ կալ իշխանազանց սև գոյժը , դողդոջուն
„ գրչովը վերջին թղթոյն վրայ կ'աւել-
„ ցընէ այս դէպքս այլ և կ'ըսէ . “ Վրախ
„ և խոց անողջանալի կոտորելոյն՝ լու-
„ ըոս արքայորդին , գեղեցիկ ծաղիկ ,
„ 'ի մատաղ հասակի մերձ 'ի փթիթս
„ մօրուաց . վկայեալ յամենայն բե-
„ րանոյ անպակաս 'ի բուլանդակ բա-
„ րոյ , և կուսութեամբ շտեմարանեալ 'ի
„ ծրարս շնորհացն Մսուրծոյ , որ յօ-
„ ժարութեամբ ևս դիմեալ 'ի պսակն
„ արեան . քանզի հարցեալ զո՞նք , ոչ ետ
„ զանուն հօրն , զի կենօքն գերեալ՝ մի
„ լիցի աւելի բեռն հօրն և աշխարհին ,
„ ընդ անդրանիկ եղբօրն] և ոնի , պսա-
„ կելոյ և հրաւիրելոյ յաթոռ թագա-
„ ւորութեանն առ կենօք հօրն : Վրան
„ զի նա եղև գլուխ գերելոցն մեր , և
„ հուրաղէկէզ լերդաչարչար և սրտա-
„ կտուր աշխարհիս մեր և ազգիս . որ
„ կամք շնչարգել և յերերման : Հա-
„ սանէ՞ ձեռն վերին որ եհարն ցասմամբ ,
„ նոյն բժշկէ ողորմութեամբ , ածելով
„ զմեծաբաց խոցն , առնելով գերեզարձ՝
„ զոր տարան ընդ այլսն , հնգեքասան
„ օր յամելով յաշխարհն , և ընտլ ա-
„ ղէտիւք . ցնոսա իրօք՝ և զմեզ խո-
„ ցոտիչ համբաւովն , : Եւ կու վերջա-
„ ցընէ պատմութիւնը յիշելով Վստան-
„ դին ծեր կաթուղիկոսին սգաւոր մա-
„ հը , որ գրեթէ 50 տարի նստաւ յա-
„ թոռն , և Հեթմոյ որդւոյ կնքահայրն
„ էր . “ Սր և ճաշակեաց իսկ և 'ի թան
„ ճրացեալ և զմուսեալ վերջնոյ լեղոյս
„ մերձ 'ի կատար կենացն՝ տեառնա-
„ բար զգլորդուն թագաւորութեանն

„ մերոյ . զսուր և զգերութիւն իւրա-
„ կան ծննդեան և սննդեան աշխար-
„ հին , մտեալ 'ի փորձ հնոցի գեհնա-
„ հոտ հրոյն բորբոքման . ձեռասուն
„ արքայորդեացն կորստեան , որք մա-
„ նաւանդ մերձ բերին զօրհաս նորա ,
„ և արարին տագնապել ստիպման՝
„ շնչոյն , բորբոքելով զծարաւ լուծման
„ յոքնաթախիծ կենցաղոյս : Օր տե-
„ սեալ Յիսուսին իւրոյ և Մսուրծոյ ,
„ ընդ՝ ազարու հանէ արտաքոյ այս-
„ քան դժնդակ կրիցս՝ յանպատումն , :
„ Իայց Հեթմոյ դառնակսկիծ ծարա-
„ ւը չիկրցան մարել և ոչ Մկանց անա-
„ պատին բազմաբուղի աղբւրներն . այլ
„ հազիւ զովացած՝ յիշեց միանգամայն
„ թագաւորութիւնը և հայրութիւնը .
„ ձեռքը սրտին վրայ դրաւ , և հետը բե-
„ րած անօգուտ և անկիրթ զօրքերը ար-
„ ձրկելով՝ դարձուց աշուրները իր կէս
„ անապատացեալ երկրէն . փութացաւ
„ քնաց առ զանն Մսուրա , պատմեց աշ-
„ խարհքին և սրտին հարուածները .
„ խնդրեց աւելի մեծ գունդ մը զօրաց
„ օգնութեան , հասարակաց թշնամոյն
„ վրէժը պահանջելու . բայց զանն իր
„ մերձաւոր թշնամեաց հետ զբաղած՝
„ այս խնդիրքը անկատար թողուց : Մն-
„ կէ յոյսը կտրած դարձած ատենն էր՝
„ որ Հեթում ուրիշ ճար մը մտածելով
„ կանչեց իշխանները ջրօրհնեաց տօ-
„ նին առթիւ , և որդւոյը յիշատակաւ՝
„ անոնց սիրտը և քիչ մ'այլ խղճերնին
„ ճիկեց , վասն զի բաւական տիրասէր չի-
„ դոնուեցան թէ պատերազմին ատեն և
„ թէ անկէ ետև . անոր համար այլ հի-
„ մա չէին համարձակէր բան մը խօսիլ .
„ մինչև նախ թագաւորն երեսը և բե-
„ րանը բացաւ , և իշխանաց և վարդա-
„ պետաց լուռ արտասուեացն այլ շնորհա-
„ կալելով՝ մխիթարեց ուսկից որ պէտք
„ էր մխիթարուիլ . զ(Սորոս Ս) արդանանց
„ պսակակից սեպելով , զ] և ոն համբերող
„ նախարարացն 'ի դրան Յազկերտի . և ,
„ աւելի կ'ընտրեմ , կ'ըսէր , ասոնց այսպէս
„ ըլլալն , քան թէ անոնց ազատութեամբ
„ ձեր և ձերիններուն կորստեան պատճառ

ըլլալն . “ Ինձ լաւ է Լեոնի ծառայ-
 ր ռեթիւնն , և թորոս իւր արեամբն 'ի
 ր վերայ քրիստոնէից սպանած , քան ես
 ր այս ամէն երկրիս և ձեր արեանդ և
 ր խղճիդ տիրացած ” : Լսյս մեծաշողի
 խօսքերն սիրտ տուին վարդապետաց և
 իշխանաց այլ փոխադարձ մխիթարու-
 թիւն տալու թագաւորին , թէ և
 սուգն ցուցածէն հազար անգամաւելի
 էր : Եւ այսպէս կէս մխիթարեալ կէս
 սգահար՝ կատարեցին յայտնութեան
 և ջրօրհնեաց հանգէսները , որչափ կա-
 րելի էր . և դարձան նորէն թագաւորը
 բարեւելու , և մխիթարելու : Եւսկէ վըս-
 տահութիւն առնելով Հեթում , յայտ-
 նեց բերնով այլ ինչ որ սիրտը կ'աղա-
 ղակէր , Լեոնի ազատութեան հնար-
 քը . դեռ ողջ էր Լեոն , և գերութեան
 միջէն այլ հաւատարիմ ձեռքով ծա-
 ծուկ իմաց կու տար իրեններուն , որ

ամուր կենան Եղիպտացւոյն դէմ : Իսկ
 խորագէտն Ֆունտուքտար ճարտար
 հաւորսի նման՝ այնպիսի շահաւոր որս
 մը ողջ կու պահէր , անով իր ուրիշ
 փափագածները որսալու համար . և
 յետ քիչ մը վախցընելու և յանդիմա-
 նելու , յիշեցընելով հօրը արհամարհա-
 կան հրաւերքը՝ որ զինքը 'ի ծառայու-
 թիւն կանչէր , հիմա տեսա՛ր , կ'ըսէր ,
 ո՞վ որո՞ւ եղաւ ծառայ . հրամեց որ տա-
 նին Վահիւրէ քաղաքին անուանի Լեո-
 նաբերդին (Քաւա՛ր-է-Ճէդէ) մէջ
 բանտեն , բայց առանց շատ նեղելու .
 ինչուան հրամանն տուաւ անոր Երու-
 սակէմ ուխտի երթալու , և երբեմն ա-
 զատութիւն այլ տայր դուրս հանելու
 զգուշութեամբ : Եւսայս դէպքն է որ
 այն ժամանակներուն մօտ մեր բանա-
 ստեղծից մէկն երգեր է :

Եւա՛ղ ըզ Լեոնն ասեմ ,
 Որ Տաճկաց դուռն ընկել գերի :
 Իմ լուս , իմ լուս , ու սուրբ Սոյս .
 Սուրբ խաչն օգնական Լեոնիս ու ամենուս :
 Սուրբանն ի մօյտան՝ ելել
 Իր ոսկի գունտն կու խաղայ : — Իմ լուս , եւ այլն :
 Խաղաց ի Լեոնն երես .
 “ Եւ խաղա՛ ու տուր տատայիդ ” :
 “ Լեոն , դու տաճիկ լինիս ,
 ր Լս ու իմ տատաս քէ՞ գերի ” :
 Լեոնն ի բերդին նըստել
 Դաստառական աչիցն ու կու լար .
 “ Բէրվանտ ”՝ որ ի Սիս կ'երթաս
 “ Դուն խապար տանիս պապայիս ” :
 Ինց որ պապն ալ զան լըսեց
 Շատ հեծել քաշեց երամով .
 Եկաւ ի սուրբանն ելաւ ,
 Շատ գետեր եհան արընեց .
 Իառ՝ զիր Լեոնն որդին
 Ու հասաւ սրբտին մուրատին :
 Իմ լուս , իմ լուս , ու սուրբ Սոյս .
 Սուրբ խաչն օգնական Լեոնիս ու ամենուս :

1 . Ի հրապարակ կամ խաղոյ տեղ : — 2 . Քեզ : — 3 . Ո՛վ կարուան : — 4 . Էառ . առաւ :

Ի՞նչիւ և քաջ երգիչ, որ կու հա-
մարձակիս թագաւորիդ պատերազմաւ
շատ արեան գետեր հանել տալ, և
յափշտակելով որդին՝ հասնիլ սրբին
հորաբոն . իրաւ այս էր Հեթումյ մտա-
ծութիւնն, բայց բաւական ոյժ չունէր
այնպիսի թշնամոյ դէմ: Եւ խանքն այլ
այսոր տեղ խորհրդակից կ'ըլլային որ
փրկանք տալով ազատէ զորդին, և
իրենցմէ բան տալով՝ կ'ուզէին խղճե-
րին սրբել: Իսկ Հեթում երկու նա-
խանձորդաց մէջ էր . մէկ կողմէն Ե-
գիպտացոց, մէկայլ կողմէն Թաթարաց .
թշնամութենէն աւելի դժար էր
բարեկամութիւնն կամ դաշնադրու-
թիւն, կամ փրկանք տալն . և եթէ
այնպէս ազատէր որդին՝ կրնար դար-
ձեալ կորսնցընել բոլոր աշխարհովը՝
Թաթարաց ձեռքով: Եւ խանքն ինչ
չարիք չընէր. Հեթումի քսան տարուան
համարձակութիւնն և խօսք անցընելն
մեծ զանից քով, շատ անհաւատ իշխա-
նաց ծանր եկեր էր, և սկսեր էին համ-
բաւել, թէ Հեթումյ բարեկամութիւնն
կասկածելի է, անիկայ ծածուկ Եսրայ
սուղանին դաշնակից է: Եւ բանը ի-
մանալով զանին քով գտնուած Եթ-
Հայոց ազնիւ ճշմարիտ ազգասէր իշ-
խանք՝ ծածուկ գրեթեով իմացուցին Հեթ-
ումյ . և որչափ այլ եղած դիպուածոց
համար ցաւակից կ'ըլլային, համարձա-
կէին այլ ըսելու, թէ Եսրայ Թագա-
ւոր, աւելի լաւ է մէկ որդւոյդ մահն, և
միւսոյն գերութիւնն, քան քու և բո-
լոր ազգիդ, զօրօք և եկեղեցեօք կոտո-
րած և աւերածն . զգոյշ կեցիր, չըլլայ
թէ Եգիպտացոյն կէս աւերակ տուն
մ'այլ տաս . ապա թէ ոչ անհաւատից
խօսքը ճշմարտած կ'երևաս, և աշ-
խարհքդ փճացընես, զմեզ այլ յամօթ
և մահապարտ ընելով: Եւ յայտնի գը-
ծուարութեամբ պաշարեալ Հեթում,
թէ թագաւորութիւնը կ'ուզէր ապրե-
ցընել և թէ որդին . աւելի յայտնի թըշ-
նամոյն վրայ մտադրացաւ քան կասկա-
ծոտ բարեկամին (Թաթարին) . և ծա-
ծուկ դեսպաններ ղրկելով Պիլյարսայ
հարցուց թէ ինչ կ'ուզէ Եսրայի ազա-

տութեան փոխարէն . Պիլյարս պա-
հանջեց անոր սիրելւոյն տեղ իր սիրե-
լւոյն ազատութիւնը, այն Եսրայի բա-
զային՝ որ դեռ Թաթարաց քով էր . եր-
կորդ, այն բերդերը՝ զոր Թաթարաց
օգնութեամբ իրմէ առեր էր Հեթում
ետ դարձընել: Հեթում դարձեալ ծե-
րութիւնը և հոգնութիւնը մոռնալով
գնաց Եսրայի զանին, և գանգատելով
Պիլյարսայ վրայ՝ իմացուց անոր պա-
հանջմունքն այլ . Եսրայ մէկէն յանձն
չառաւ թողուլ զԵսրայ . բայց Հե-
թումյ ետ դարձին՝ ի Եգիպտոս եղբօր
որդւոյը մէկը խաւրեց առ զանն, և
վերջապէս բերել տուաւ զգերին, որ
ինքնին գրեց առ Պիլյարս և իմացուց
Հեթումյ ձեռք ազատիլն ի Թաթարաց:

Եւ յա ժամանակներս Պիլյարս ե-
լեր եկեր էր Եսրայի պաշարելու և
քրիստոնէից ձեռքէն առնելու, և առաւ
այլ: Հոն իմացուց Հեթում այլ որ պա-
տրաստ է խաւրելու իրեն իր բարեկամը .
բայց անոր հետ ուզած բերդերը տալու
կու դժարէր: Եւ յայն ատեն Պիլյարս
իրեն գրեց . « Ես մտածէ, թագա-
ւոր, թէ որ դու քու որդիդ և թագա-
ւոր ժառանգդ ազատելու համար այդչափ
կու դժուարիս, ես չեմ կրնար աւե-
լի խստանալ իմ բարեկամիս վրայ,
որուն հետ արենակցութիւն այլ չու-
նիմ . ինչ որ կ'ուզես ըրէ Եսրայ .
բայց գիտցիր որ մեր հաշտութիւնը
աւրող դու կ'ըլլաս, և ես ասկէ դառ-
նալուս ատեն կու գամ վրայդ »: Եւ յայն
սպառնալիքէն ետեւ այլ ուշանալու և
որոշելու բան չէր մնար . Հեթում
յանձն առաւ պայմանները, և Եսրայ
քայ մէջ դաշնադրութիւն մը ըրին, և
երկու կողմէն խաւրեցին խնդրուածնե-
րը, հանդերձ ընծայիլք:

Եւ քսան և երկու ամսոց դարձաւ
գերեալն Եսրայ ի Եգիպտոս, և հետը
իր հօրեղբորորդին և իրենց ճորտերը:
Հեթում բոլոր իշխաններովն և աշ-
խարհագումար հանդիսիւ օրով ճամբայ
ընդ առաջ գնաց որդւոյն, որ անկէ ե-
տեւ իրեն քանի մը որդիէ աւելի կ'ար-

ժեր : Արդեօք ծեր նահապետին (Յակովբայ՝ Յովսեփայ ողջ ըլլալն լսելով Ագիպտոս երթալ և ուրախանալն, թէ Հեթմայ իր Ագիպտոսէ և նոյն իսկ Յովսեփայ դրուած բանտէն¹, ելած եկած որդւոյն տեսութեամբ՝ փոխադարձ ուրախութիւնն աւելի էր. ես չեմ գիտեր, և ոչ որ գիտէ. և ոչ իսկ այն իրարու սլլուած երկու սրտերն, որ կու գգան և չափը չեն գիտեր : ... Արք մտան ՚ի Տարսնն թագաւորական քաղաքն, ամէն կողմէ ժողովուած վանականք և աշխարհականք եկան յուրախակցութիւն. և երբ եկան յարքունիս, առաջին հանդիպողն եղաւ անշուշտ ծաղկահասակ պարկեշտ կին մը ընծայելով իր հետ ՚ի համբոյր Առնի՝ իրենց բազմապտուղ սիրոյն երկու նախընծայ երախայրիբը՝ հեզնազիկ Օպպունը, և թագի պայազատ 3-4 ամեայ Հեթմիկը, զոր այն սև պատերազմէն քիչ առաջ ՚ի լոյս ընծայեր էր մայրն, Առնան տիկնաց տիկին (դուստրն իշխանին Ամբրոնի) :

Այսպէս Հեթում հասնելով ըստ երգչին սրբին ճառարին, տարինելով փափագած ուրիշ մէկ կամքն այլ ուզեց կատարել. 45 տարի գլուխը ծանրացած թագը՝ դնել ՚ի գլուխ Առնի և երթալ հանգիլ յաւիտենականութեան նախափունջը, միայնարան մը : Առն հրաժարեցաւ լալով, աղաչանօք, որ չստիպէ զինքը հօրը կենդանութեան ատեն անոր աթոռը նստիլ. բայց հօրը հոգնութիւնն և ներքին փափագն աւելի ստիպողական էր. անշուշտ հեռուէն ձայն մ'այլ կու լսէր փութալու, զոր ուրիշներն չէին հասկընար : Յաջորդ տարին դարձեալ և վերջին անգամ երկայն ճանապարհորդութիւն մը ըրաւ առ զանն Ապաղա, նախ շնորհակալելով Առնի ազատութեան պատճառ ըլլալուն. և երկրորդ իր հրաժարելու և անոր թագաւորութեան հրաման և հրովարտակ ուզելով. զոր և առաւ, փութացաւ եկաւ յարքունիս, ժողով ըրաւ և կամայ ակամայ բռնադատեց զԱռն

1. Այսպէս կ'աւանդեն պատմիչք մեր :

յանձն առնուլ իշխանութիւնը, եթէ և իր ձգած թագը դնել չէր ուզէր իր կենդանութեան ատեն :) Գիրանեաց ու բեհեզին հետ թօթուելով ամէն աշխարհական հոգ և մտածմունք, անկէ ետեւ վանքեր և անապատներ կու պտրտէր, երկրորդ և անանց թագաւորութեան մը պատրաստուելու. որոյ համար ճգնողական զգեստով այլ զարդարուած և անունը Ասկար դրած, կու սպասէր հանդերձեալ հրաւիրակին, որ և չուշացաւ. վերք մը փութացուց զմահը (1270), և հասուց զինքը իր փափագած և անխուլ հանգստեանը. թողլով զմարմինը իր սիրելի Արազարկ վանաց մէջ սիրելագոյն անձինքով, իր սրբակենցաղ կենակցին Օպպէլ թագուհւոյն, որ գրեթէ քսան տարի իրմէ առաջ հոն արդարոց քունը կու վայելէր :

Առն Բ յետ երկայն և ծանր սգոյ, աղաչելով և ստիպուելով իր բոլոր աշխարհքէն, և յօտար թագաւորաց և դրացեաց, հազիւ յանձն առաւ հօրը թագն ՚ի գլուխ դնել. և անոր նման պէսպէս դիպուածներու և կրից մէջ թագաւորելով, նոյնպէս սիրելի եղաւ ազգին և պատուելի օտարաց. մասնաւոր փոյթ և սէր ունեւելով եկեղեցեաց և վանաց և գրագիտաց, որոց առատապէս նուէրք տայր, ոչ իր երկրին մէջ միայն, այլ և ՚ի Աեծ հայր և ՚ի գաղթականս յատալիս. ուր և Աերուճիա քաղաքին հայոց եկեղեցւոյն նուիրած ճաշոց գիրքը՝ իր ձեռագիր ընծայագրովը կայ մինչև ցայժմ :

Թագաւորութեանը հինգերորդ տարին իր գերող Ագիպտացւոց հետ պատերազմելով և վնասելով, վերջապէս յաղթական պատերազմէն դարձած՝ իրմէ երիտասարդ ձիէն վիրաւորուելով, մեծաւ փառօք մեռաւ ծերունի սպարապետն, հօրեղբայր թագաւորին Ամբատ (1276), յետ մահուան ամենայն համամայր եղբարցն, որոց անդրանիկն էր : Իսկ Առն յետ քսանամեայ թագաւորութեան վախճանեցաւ

ամնոյս նոյնաթիւ աւուր մէջ (6 թերուարի) . որոյ քաղաքավարութեան ամենայն դիպուածները պատմելու համար՝ ինչուան 'ի լոյս հսկեն այլ չի բաւեր : Իայց արդէն մեր կանթեղիկն կածկրտայ , և կրակարանս 'ի մոխիր դառնայ : — Գիշեր բարի :

Հ . Ղ . Վ . Մ . ԱԼԻՇԱՆ

Այցելութիւն մը 'ի Նիւմ :

Վիմ տեսնելու բաներէս անշուշտ ինձի համար աւելի հետաքրքրականն իր բանաստեղծն էր : Թէլօրէն նամակ ունէի , որ այս եղական հասցէն ունէր .

“ Ի՞նչ . Ուրպուլ բանաստեղծ և հացագործ ” : Իրեն քանի մը ոտանաւորներն կարդացեր էի , որոնք ինծի խիստ ազուր երեցեր էին . զինքը գրեթէ Պ . Իտամայ ու Լանդարայի նման մարդ մը դրեր էի միտքս :

Ուստի Վիմ հասնելէս ետեւ առաջին այցելութիւնս եղաւ առ Ուրպուլ : Պատանի մը՝ որուն պանդոկէն ելլելու ժամանակս պատահեցայ և քերթողին տունն հարցուցի , ոչ միայն բացատրեց զայն , այլ նաև անշուշտ օտարականի մը այս հետաքրքրութեան վրայ ուրախացած , ուզեց ինձի առաջնորդել . ես ալ յանձն առի :

Վեռ չհասած , Լմիթիթատրոնի հրապարակէն անցանք : Վլուխս միւս կողմ դարձուցի , որպէս զի նոյն վայրկէսին միտքս ու աչքս այն հռովմէական հսկային երթալով չզբաղին :

“ Լմիթիթատրոնին դիմացէն կ'անցնինք , ըսաւ ինծի իմ առաջնորդս : — Ընորհակալ եմ , բայց անոր չեմ նայիր , պատասխանեցի ” :

Երբ քայլ անդին , պզտի փողոցի մը անկեան քով կանկ առաւ : “ Իհաւասիկ տունն ուր Ուրպուլ կը բնակի : — Ո'եծապէս շնորհակալ եմ : Գիտէս արդեօք թէ այս ժամուն զին-

քրտունը կրնամ գտնել , : Բաջնորդս գլուխն երկնցուց , և կիսաբաց դռնէն քովընտի ծռած լաւ մը դիտելով , “ Խանութն է ” , պատասխանեց և հեռացաւ :

Սայրկեան մը՝ նամակը ձեռքս՝ մը տայոյզ կեցայ : — Ես մարդուս ինձի ընելու ընդունելութեան մէջ ո՛վ աւելի յաղթող պիտի գտնուէր , արդեօք բնութիւնն էթէ իր վիճակը : Իանաստեղծութեան թէ ալեր վրայ պիտի խօսի . ճեմարանի թէ մշակութեան վրայ , հրատարակութեան թէ հնձոց վրայ : Գիտէի թէ զինքը մեծ մարդ մը պիտի գտնեմ , բայց չէի կարծէր որ այնպէս անպաճոյճ պիտի տեսնեմ :

Երս մտայ :

“ Հրամանքդ ես Պ . Ուրպուլ , որու հետ պատիւ ունիմ խօսելու :

— Ես ինքն եմ :

— Իհա՞ Պ . Թէլօրին նամակ մը :

— Ի՛՛հ , ինչ կ'ըսես . ինչպէս է :

— Ըստ աղէկ ” :

Եւ սկսաւ կարգալ :

Եւ միջոցին զինքը դիտեցի : Երեսունը հինգէն երեսունը եօթը տարու մարդ մի էր , երկայնահասակ . երեսին գոյնը թուր և գրեթէ սևորակ , մազերն սև և փայլուն , ատամունքն բիւրեղանման : Եւունս երբոր հասաւ , աչքը նամակէն ինծի դարձուց , և երկրորդ անգամ զիս ողջունեց : Ես նայուածքն երագ ու խորին էր , և այնչափ կրցայ տեսնել որ գեղեցիկ աչքեր ունէր , այն հնդկային զօրաւոր ու լծաւիշտման աչքերէն , որ սէր ու բարկութիւն կը յայտնեն :

“ Պարոն , ըսաւ ինձի , մեծապէս պարտական եմ Թէլօրին , և չեմ գիտեր ինչպէս իմ երախտագիտութիւնս իրեն յայտնեմ ” : Ես յարգանք մը ծռեցայ : “ Իայց կը ներէս ինձի համարձակութեամբ ու ազատութեամբ քեզի հետ վարուելու :

— Ինչո՞ւ չէ :

— Իանաստեղծն և ոչ թէ հացագործն եկեր ես տեսնել , այնպէս չէ : Երբ ես առաւօտեան հինգէն ինչուան